ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1393 -Ա **16 մարտի 2009թ.**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ) ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009Թ ՄԱՐՏԻ 10-Ի ԵՎ 11-Ի ՆԻՍՏԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի պետական սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովի 2009թ. մարտի 10-ին և 11-ին կայացած նիստերի արձանագրությունները.

1. Հաստատել 2009թ. մարտի 10-ին և 11-ին կայացած.

1.1 Հողամասերի կառուցապատման իրավունքով տրամադրման մրցույթի արդյունքները և հաղթող ճանաչել սույն որոշման 1-2 հավելվածներում նշված անձանց:

2 Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի պետական սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովի քարտուղար Ն.Տեր-Ստեփանյանին՝ սահմանված ժամկետում ապահովել սույն որոշմամբ մրցույթում հաղթող ճանաչված անձանց կողմից վճարման ենթակա գումարների մուծումը /փոխանցումը/ թիվ 1 տեղական գանձապետական բաժանմունքում գտնվող Երևանի քաղաքապետարանի հ. 900015211072 հաշվարկային հաշվին:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին՝ հաշվապահության միջոցով ապահովել մրցույթի մասնակից չհաղթած հայտատուների կողմից Երևանի քաղաքապետարանի հ.900015211072 հաշվարկային հաշվին մուծված նախավճարների վերադարձը (հավելված հ.3):

4. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին.

4.1 Մրցույթում հաղթողների կողմից վճարման ենթակա վճարումները կատարելուց հետո մրցույթում հաղթողներին, ապահովել հողամասի հատակագծերով, նշահարման ակտերով, կնքել հողամասերի կառուցապատման պայմանագրեր:

5. Ընդունել ի գիտություն, որ.

5.1 Մրցույթում հաղթած անձանց հողամասերում նպատակային նշանակության օբյեկտների նախագծման համար անհրաժեշտ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրվում է և նախագիծը համաձայնեցվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից՝ հիմք ընդունելով ելակետային տվյալներով սահմանված չափանիշները և Երևանի քաղաքապետի 23.07.2001թ. հ.789 որոշմամբ սահմանված՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության կողմից տրվելիք բնապահպանական պահանջներն ու սահմանափակումները:

5.2 Մրցույթում հաղթած անձինք իրենց միջոցներն են ներդնելու նախագծով հաստատված կառույցների և ինժեներական հաղորդագծերի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և շինարարական-մոնտաժային աշխատանքների կատարումն ապահովելու համար:

5.3 Հողամասերի նկատմամբ քաղաքացիների ու իրավաբանական անձանց իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ. Արեյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
16.03.2009թ. N1393 –Ա ՈՐՈՇՄԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ) ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2009Թ ՄԱՐՏԻ 10-Ի և 11-Ի ՆԻՍՏՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂԻ

1. Հաղթողի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, /իրավաբանական անձի անվանումը/, հասցեն

Փայլակ Հայրապետյան, անձ.AG 0691187, 11.05.2006թ. 004, ք. Երևան, Օրբելի փողոց 8-35:

1.1Հաղթողը՝ Փայլակ Հայրապետյան, մրցույթի արդյունքներով ընդունել է հետևյալ պարտավորությունները:
ա/ Շինարարության սկիզբը ոչ ուշ մեկ տարուց շին. թույլտվությունը ստանալու օրվանից:
բ/ Կառուցապատման իրավունքի տարեկան վճարը մեկնարկային 4640.0 հազ. դրամի փոխարեն վճարել
4800.0 հազ. դրամ:

1.2 Ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում սույն որոշման տվյալ հավելվածը ենթակա է վերանայման՝ չեղյալ համարելու առումով:

1.3 Սույն որոշման տվյալ հավելվածի 1.1 կետի *ա* ենթակետի հսկողությունը դնել Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության, 1.1 կետի *բ* ենթակետի հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության վրա:

2. Հաղթողը մուծել է Երևանի քաղաքապետարանի գանձապետական հ.1 բաժանմունքում գտնվող

ա/ 238001333000 հ/հ՝ մասնակցության վճար - *30.0 հազ.դրամ «ԱՇԻԲ», հ.9030500673870, տրված 05.03.2009թ.*

բ/900015211072 հ/հ՝ նախավճար — *232.0 հազ.դրամ «ԱՇԻԲ», հ.9030500673885, տրված 05.03.2009թ.*

3.Կառուցապատվող հողամասի հասցեն, մակերեսը, ծածկագիրը, տրամադրման ժամկետը -

Էրեբունի, Գայջեգործների 1-ին փողոց հ.28/2, 13336.0քմ, Կ 09-03, 20 տարի:

4. Հողամասի օգտագործման նպատակը՝ հանգստի գոտու կազմակերպման համար

5. Կառուցապատման իրավունքի տրամադրման մրցույթի որոշման համարը –

Երևանի քաղաքապետի ---03.02.2009թ., հ. 525-Ա որոշմամբ:

Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի ղեկավար Գ.Մելքումյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 16.03. 2009թ.
N1393 -Ա ՈՐՈՇՄԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ) ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009Թ ՄԱՐՏԻ 10-Ի և 11-Ի ՆԻՍՏՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂԻ

1. Հաղթողի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, /իրավաբանական անձի անվանումը/, հասցեն

Հակոբ Կոստանյան, անձ.AF 0388606, 15.11.2001թ. 009, ք. Երևան, Նոր-Արեշ 7 փող, տուն 41:

1.1Հաղթողը՝ Հակոբ Կոստանյան, մրցույթի արդյունքներով ընդունել է հետևյալ պարտավորությունները:
ա/ Շինարարության սկիզբը ոչ ուշ մեկ տարուց շին. թույլտվությունը ստանալու օրվանից:
բ/ Կառուցապատման իրավունքի տարեկան վճարը մեկնարկային 50.0 հազ. դրամի փոխարեն վճարել
54.0 հազ. դրամ:

1.4 Ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում սույն որոշման տվյալ հավելվածը ենթակա է վերանայման՝ չեղյալ համարելու առումով:

1.5 Սույն որոշման տվյալ հավելվածի 1.1 կետի *ա* ենթակետի հսկողությունը դնել Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության, 1.1 կետի *բ* ենթակետի հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության վրա:

2. Հաղթողը մուծել է Երևանի քաղաքապետարանի գանձապետական հ.1 բաժանմունքում գտնվող

ա/ 238001333000 հ/հ՝ մասնակցության վճար - *30.0 հազ.դրամ «ՎՏԲ-Հայաստան բանկ», հ.90212008935051, տրված 12.02.2009թ.*

բ/900015211072 հ/հ՝ նախավճար — *2.5 հազ.դրամ «ՎՏԲ-Հայաստան բանկ», հ.90212008784051, տրված 12.02.2009թ.*

3.Կառուցապատվող հողամասի հասցեն, մակերեսը, ծածկագիրը, տրամադրման ժամկետը -

Էրեբունի, Էրեբունի փողոց հ.18/5, 115.0քմ, Կ 09-02, 20 տարի:

4. Հողամասի օգտագործման նպատակը՝ հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար

5. Կառուցապատման իրավունքի տրամադրման մրցույթի որոշման համարը –

Երևանի քաղաքապետի ---03.02.2009թ., հ. 525-Ա որոշմամբ:

Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի ղեկավար Գ.Մելքումյան

ՀԱՎԵԼՎԱԾ 3
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 16.03. 2009թ.
N1393 –Ա ՈՐՈՇՄԱՆ

2009Թ ՄԱՐՏԻ 10-Ի և 11-Ի ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ, ՉՀԱՂԹԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ Հ.1 ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 900015211072 Հ/Հ ՄՈՒԾՎԱԾ ՆԱԽԱՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՑՈՒՑԱԿ

1. Սոնա Թևոսյան – 2.5 հազ. դրամ /անձն. AF 0770824 16.09.2003թ. 004 կողմից, կտրոն հ.000720, «Կոնվերս բանկ» ՓԲԸ, 20.02.2009թ. /:
2. Սասուն Նազարյան – 232.0 հազ. դրամ /անձն. AC 0583706 15.01.1999թ. 004 կողմից, կտրոն հ.9030600674731, «ԱՇԻԲ», 06.03.2009թ. /:

Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի ղեկավար Գ.Մելքումյան